Բնակչության եկամուտներ և աղքատություն. հետպատերազմյան Արցախի խնդիրները

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Պատերազմից հետո Արցախ վերադարձած կամ դեռևս Հայաստանում գտնվող արցախցիների խնդիրները բազմաթիվ են ու բազմապիսի: Շատ շատերը կորցրել են ամեն ինչ՝ տուն, ունեցվածք, ապրուստի բոլոր միջոցները. բազմաթիվ մեր հայրենակիցներ պատերազմի օրերին իրենց տները ստիպված են եղել լքել այնպիսի շտապողականությամբ, որ անգամ հագուստ ու անձնական իրեր չեն հասցրել վերցնել: Եվ այսօր՝ հայրենազրկված, հարազատներ կորցրած, վիրավոր ու դեռ չապաքինված մերձավորներ ունեցող մեր շատ հայրենակիցներ ունեն նաև լրջագույն սոցիալական խնդիրներ և դժվարությամբ են պատկերացնում՝ ինչպես շարունակել ապրել:

Հումանիտար օգնության ոլորաններում

Եկամուտների մշտական աղբյուրի կորուստը մարդկանց մոտ ամենատարածված սոցիալական խնդիրն է հետպատերազմյան Արցախում: Ադրբեջանի իրավասության տակ անցած գյուղատնտեսական նշանակության հողատարածքների մեծ մասը, կորցված գյուղերի ու քաղաքների բնակիչների տնամերձ հողամասերը, փոքր ու միջին բիզնեսի ու հանրային ձեռնարկությունների աշխատատեղերն այլևս դադարել են լինել բնակչության մի ստվար մասի եկամուտի աղբյուր: Արդյունքում մեկ հարվածով ստացել ենք գործազրկության և աղքատության մակարդակի կտրուկ աճ: Ակնհայտ է, որ մինչև նոր պայմաններում հնարավոր լինի ինչ-որ մոդելով տնտեսություն կազմավորել, կարիք է լինելու մարդկանց ապրելու պայմաններով ապահովել: Կարիքը հատկապես սուր կզգացվի ձմեռային ամիսներին:

Միևնույն ժամանակ չպետք է մոռանալ, որ առաջնային կարևորության հարցը մնալու է օգնություն տրամադրելու գործընթացից դուրս գալը և բնակչության համար սեփական աշխատանքով եկամուտ ստեղծելու հնարավորություններ ապահովելը: Այլապես այս գործընթացը հղի է բազմաթիվ այլ՝ կողմնակի բացասական դրսևորումներով:

Արցախի բնակավայրերում հետպատերազմյան օրերին ամենամարդաշատ վայրերը Արցախփոստի գրասենյակներն էին. մարդիկ երկար հերթերի մեջ օգնություն էին ստանում: Տարատեսակ օգնությունների բաժանման գործընթացից դժգոհությունների պակաս էլ չկար. համակարգման և կազմակերպման բացակայության պայմաններում «ճարպիկները» նույն օգնությունը մի քանի անգամ են ստանում կամ, իրապես կարիքավորի փոխարեն, օգնությունը հասնում է դրա կարիքն իրականում չունեցողներին: Համենայն դեպս՝ նման ընկալումների պակաս այսօր չկա արցախցիների մոտ:

Այստեղ պետք է շատ ուշադիր լինել. հումանիտար աջակցություն տրամադրելիս կարևոր է գործընթացը կազմակերպել այնպես, որ երկարաժամկետ հեռանկարում հասարակության մեջ չխորանա անարդարության զգացումը: Աղքատության մեջ հայտնված մարդը բազմաթիվ վախեր ունի, չափազանց թերհավատ է ինստիտուտների և անձանց նկատմամբ, այդ պատճառով էլ աջակցությունը պետք է տրամադրվի խիստ գրագետ: Շատ կարևոր է ամեն ինչ իրականացնել այնպես, որ անարդարության զգացում չառաջանա այս՝ բավականին զգայուն փուլում: Սա պետք է հաշվի առնեն պատասխանատուները:

Թիրախային խմբերի հետ աշխատանքը

Սոցիալական աջակցության գործընթացը կազմակերպելիս թերևս հենց այս փուլից պետք է հասկանալ, թե կեցության, բնակարանային ապահովության և աշխատանքի ինչպիսի ապագայի տեսլական ունենք պատերազմից տարբեր չափով տուժած և տարբեր իրողությունների մեջ հայտնված մարդկանց խմբերի համար: Բոլորի համար նույն չափանիշներով ու միայն այսօրվա ինչ-որ խնդիր լուծելը բաց թողնված հնարավորություն ու կորսված ժամանակ կարող է համարվել: Մինչև Արցախի տնտեսության նոր մոդելի մասին պատկերացումների հստակեցումը և անհրաժեշտության դեպքում աշխատուժի վերապրոֆիլավորման գործի նախաձեռնումը՝ այս փուլից սոցիալական աջակցության մեխանիզմների միջոցով առնվազն կարելի է խրախուսել և ազդել տարբեր երկարաժամկետ նպատակների ուղղությամբ մարդկանց որոշումների վրա:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Զավթված Շուշիից, Քարինտակից, Հադրութից ու շրջանի գյուղերից, Ասկերանի շրջանի վերին ենթաշրջանի գյուղերից, Մարտունու շրջանի գյուղերից, Մարտակերտի շրջանի Մատաղիս և Թալիշ գյուղերից Ստեփանակերտ և մյուս բնակավայրեր տեղափոխված մեր հայրենակիցների կոմպակտ վերաբնակեցումը, նախկին համայնքների և սոցիալական միջավայրի շրջանակներում կյանքի կազմակերպումը ապագայում կարող է շատ կարևոր նշանակություն ունենալ բազմաթիվ հարցերում, այդ թվում՝ տեղական ավանդույթներն ու կոլորիտը ժամանակի ընթացքում չկորցնելու առումով: Այս տեսանկյունից աշխատել է պետք հենց ամենասկզբից՝ օգտագործելով նաև աջակցող ու խրախուսող ծրագրերի մեխանիզմները:

Քարվաճառից, Քաշաթաղից և մյուս տարածքներից տեղափոխված մեր հայրենակիցների խնդիրները կարիք ունեն առանձին դիտարկման: Նորից հարկավոր կլինի հասկանալ՝ ինչ ապագա ենք պատկերացնում այս մարդկանց համար, ճանապարհն ընդհանուր բնակչության հետ ասիմիլյացիա՞ն է, թե այլ ուղիներ կան, և հենց այսօրվանից ըստ այդմ կազմակերպել աշխատանքը նրանց հետ:

Նույնատիպ խթաններ կարելի է կիրառել նաև գյուղական և քաղաքային բնակչության հարաբերակցության ուղղորդման նպատակով, քանի որ հիմա շատ արագ ուրբանիզացման վտանգ կա: Գյուղատնտեսական նշանակության հողատարածքների մեծ մասի կորստից հետո՝ պապականորեն գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսություններում մարդիկ կորցրել են այլևս երբևէ իրենց սիրած զբաղմունքով վաստակելու հնարավորության հույսը և սկսել են Ստեփանակերտում ու մյուս քաղաքներում կյանքը կառուցելու ծրագրեր մշակել: Եթե ժամանակակից բարձրտեխնոլոգիական գյուղատնտեսությունը դիտարկվում է որպես ապագայում Արցախի տնտեսության կարևոր բաղադրիչ, ապա այսօր արդեն հարկավոր է զբաղվել մասնագիտացված աշխատուժի պահպանման հարցերով:

Նմանատիպ նպատակները պետք է միշտ աչքի տակ ունենալ աջակցության ծրագրեր մշակելիս և իրականացնելիս, որպեսզի դրանցով ոչ միայն օրախնդիր հարցեր լուծվեն, այլև ապագային միտված խթաններ կիրառվեն:

Համառոտագիրը մշակվել է 2020թ. դեկտեմբերի 18-ին կայացած՝ «Հետպատերազմյան իրականություն. եկամուտներ և աղքատություն» խորագրով առանց հողամերձի իրավունքի առցանց քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, քաղաքացիական հասարակության և միջազգային կառույցների ներկայացուցիչներ: